ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

---

« 23 » սեպտեմբեր 2022թ. No 4466 - Ա

# «ՀԱՃԱԽ ՀԱՆԴԻՊՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՄԱՏԻԿ ՊԱԹՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ, ՎԱՐՄԱՆ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Առողջապահության նախարարի 2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 20-Ն հրամանի հավելված 1-ի 15-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի մանկաբուժության ամբիոնի վարիչ, բ.գ.թ.՝ Կարինե Սարիբեկյանի 05.09.2022թ. հայտը.

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել 2022թ.-ի սեպտեմբերից կրկնողաբար Երևան քաղաքում ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի մանկաբուժության ամբիոնի կողմից կազմակերպված «Հաճախ հանդիպող առանձին սոմատիկ պաթոլոգիաներ երեխաների մոտ, վարման և հսկողության առանձնահատկությունները արտահիվանդանոցային պայմաններում» թեմայով 10-օրյա դասընթացի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հաճախ հանդիպող առանձին սոմատիկ պաթոլոգիաներ երեխաների մոտ, վարման և հսկողության առանձնահատկությունները արտահիվանդանոցային պայմաններում» թեմայով դասընթացի՝

1) մասնակիցներին շնորհել ՇՄԶ 32 տեսական և 14 գործնական կրեդիտ,

2) մաս 1-ի մասնակիցներին շնորհել ՇՄԶ 8 տեսական և 2 գործնական կրեդիտ, մաս 2-ի մասնակիցներին՝ ՇՄԶ 5 տեսական և 4 գործնական կրեդիտ, մաս 3-ի մասնակիցներին՝ ՇՄԶ 3 տեսական և 2 գործնական կրեդիտ, մաս 4-ի մասնակիցներին՝ ՇՄԶ 14 տեսական և 7 գործնական կրեդիտ:

3) դասընթացավարներ Կարինե Սարիբեկյանին շնորհել՝ ՇՄԶ 3 տեսական կրեդիտ, Գոհար Այվազյանին՝ ՇՄԶ 8 տեսական և 2 գործնական կրեդիտ, Գայանե Խլոյանին՝ ՇՄԶ 8 տեսական և 6 գործնական կրեդիտ, Սևան Իրիցյանին՝ ՇՄԶ 4 տեսական և 1 գործնական կրեդիտ, Միլենա Ոսկանյանին՝ ՇՄԶ 9 տեսական և 4

գործնական կրեդիտ, Լուսինե Ավետյանին՝ ՇՄԶ 4 տեսական և 1 գործնական կրեդիտ:

3. Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Աստղիկ Առաքելյանին՝ եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը հայտատուին:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**Հավելված**
**ՀՀ առողջապահության նախարարի**
**« 23 » սեպտեմբեր 2022թ.**
**N 4466 - Ա հրամանի**

**ԾՐԱԳԻՐ**

**«ՀԱՃԱԽ ՀԱՆԴԻՊՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՄԱՏԻԿ ՊԱԹՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ, ՎԱՐՄԱՆ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

2022թ. սեպտեմբերից կրկնողաբար ք. Երևանում (ՀՀ ԱՆ ԱԱԻ, Արաբկիր ԲՀ)

ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի մանկաբուժության ամբիոն

| | | |
|---|---|---|
| Օր 1 ՀՀ ԱՆ ԱԱԻ | | |
| 10:00-10:30 | Դասընթացի բացում, մասնակիցների ներկայացում | Կարինե Սարիբեկյան<br>Գոհար Այվազյան<br>Միլենա Ոսկանյան |
| 10:30-11:00 | Դասընթացի նպատակների, օրակարգի ներկայացում | |
| 11:00-12:00 | Նախաթեստ | |
| 12:00-13:00 | Ընդմիջում | |
| 13:00-14:30 | **Տեսական**<br>Առավել հաճախ հանդիպող սոմատիկ պաթոլոգիաները երեխաների մոտ, առաջնային օղակում դրանց վարման առարձնահատկությունները: | Գոհար Այվազյան<br>Կարինե Սարիբեկյան |
| 14:30-15:30 | **Տեսական**<br>Սոմատիկ առանձին հիվանդություններով տառապող երեխաների դիսպանսեր հսկողության կազմակերպումը պետական պատվերի շրջանակներում: Գործող նորմատիվները: | Գոհար Այվազյան<br>Կարինե Սարիբեկյան |
| 15:30-16:00 | Օրվա նյութի ամփոփում | |
| **Մաս 1. ԻՄՈՒՆՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ: ԻՄՈՒՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԱԼԵՐԳՈԼՈԳԻԱԿԱՆ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԼԻՆԻԿԱԼԱԲՈՐԱՏՈՐ ՈՒ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆՈՒՄ** | | |
| Օր 2 | | |
| 10:00-12:00 | **Տեսական**<br>Բնածին իմուն համակարգը, հիմնական բջիջները և մոլեկուլները: | Սևան Իրիցյան |
| | **Տեսական**<br>Բնածին իմունային խանգարումներ և անբավարարություններ: | |
| | **Գործնական**<br>Բնածին իմուն համակարգի լաբորատոր գնահատման մեթոդները: | |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | **Տեսական**<br>Ձեռք բերովի իմուն համակարգը, հիմնական բջիջները և մոլեկուլները: | Սևան Իրիցյան |
| 15:00-16:00 | **Տեսական**<br>Կոմպլեմենտի համակարգ: Իմունային անբավարարություն: | Սևան Իրիցյան |
| 16:00-16:30 | **Գործնական**<br>Ձեռք բերովի իմուն համակարգի լաբորատոր գնահատման մեթոդները: | Սևան Իրիցյան |
| Օր 3 | | |
| 10:00-12:00 | **Տեսական** | Լուսինե Ավետյան |

| | | |
|---|---|---|
| | Հաճախ հանդիպող մանկական ալերգոլոգիական հիվանդություններ: Սննդային ալերգիա: Սուր եղնջացան/անգիոայտուց: | |
| 12:00-13:00 | **Տեսական**<br>Ատոպիկ մարշ (Ատոպիկ դերմատիտ, Ալերգիկ ռինիտ, Ասթմա): | Լուսինե Ավետյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | **Գործնական**<br>Ալերգոլոգիական մաշկային պրիկ թեստեր, Սպիրոմետրիա: | Լուսինե Ավետյան |
| 15:00-16:00 | **Տեսական**<br>Դեղորայքային ալերգիան երեխաների մոտ, հանդիպման հաճախականությունը, ախտորոշման մեթոդներ: | Լուսինե Ավետյան |
| 16:00-16:30 | Օրվա նյութի ամփոփում | |
| **Մաս 2. ԱՈՒՏՈՒՄՄՈՒՆ ԵՎ ԱՈՒՏՈԲՈՐԲՈՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԱՅԼ ՌԵՎՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ:** | | |
| Օր 4 | | |
| 10:00-12:00 | **Տեսական**<br>Վասկուլիտները երեխաների մոտ, տարբերակիչ ախտորոշումը, ուղղորդումը: Հեմոռագիկ վասկուլիտ: | Գայանե Խլոյան<br>Էքսուզյան Գարունիկ |
| 12:00-13:00 | **Գործնական**<br>Վասկուլիտների կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում, Իրավիճակային խնդիրներ: | Գայանե Խլոյան<br>Էքսուզյան Գարունիկ |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:30 | **Տեսական**<br>Հաճախակի հանդիպող հոդամկանային պաթոլոգիաները երեխաների մոտ, տարբերակիչ ախտորոշումը: | Գայանե Խլոյան<br>Էքսուզյան Գարունիկ |
| 15:30-16:30 | **Գործնական**<br>Կլինիկական դեպքերի ներկայացում և քննարկում, Իրավիճակային խնդիրներ: | Գայանե Խլոյան<br>Էքսուզյան Գարունիկ |
| Օր 5 | | |
| 10:00-11:30 | **Տեսական**<br>Յուվենիլ իդիոպաթիկ արթրիտ, հիմնական կլինիկական նշանները, ախտորոշումը և ուղղորդումը: | Գայանե Խլոյան<br>Էքսուզյան Գարունիկ |
| 11:30-13:00 | **Գործնական**<br>Իրավիճակային թեմատիկ խնդիրներ/թեստեր; Արդյունքների քննարկում: | Գայանե Խլոյան<br>Էքսուզյան Գարունիկ |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| **Մաս 3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԻՍՊԱՆՍԵՐ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ** | | |
| 14:00-16:00 | **Տեսական**<br>Պարբերական հիվանդություն, կլինիկական դրսևորումները, տարբերակիչ ախտորոշումը, վարումը պոլիկլինիկական մակարդակում: | Գայանե Խլոյան |
| 16:00-16:30 | **Գործնական**<br>Պարբերական հիվանդության ախտորոշման առանձին դեպքերի ներկայացում մասնակիցների պրակտիկայից, քննարկում, վերլուծություն: | Գայանե Խլոյան |
| Օր 6 | | |
| 10:00-11:00 | **Գործնական**<br>Մասնակցություն հիվանդ երեխաների համայցին կլինիկական դեպքերի ներկայացում, դեպքերի քննարկում՝ վերլուծություն: | Գայանե Խլոյան |
| 11:00-12:20 | **Տեսական**<br>Պարբերական հիվանդության հնարավոր | Գայանե Խլոյան |

| | | |
|---|---|---|
| | բարդությունները, դիսպանսեր հսկողությունը մասնագիտացված կենտրոնում: | |
| 12:20-13:00 | **Գործնական**<br>Հիվանդ երեխայի դիսպանսեր այցի դիտարկում, քննարկում: | Գայանե Խլոյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| **Մաս 4. ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱխ ՀԱՆԴԻՊՈՂ ՆԵՖՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԳԱՍՏՐՈԷՆՏԵՆՏԵՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱԹՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՈՏ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԱՐՈՒՄԸ ԱԱՊ ՕՂԱԿՈՒՄ** | | |
| 14:00-15:30 | **Տեսական**<br>Միզուղիների ինֆեկցիան երեխաների մոտ, տարբերակիչ ախտորոշումը, բուժումը, հետագա հետազոտումը, վարումը: | Միլենա Ոսկանյան |
| 15:30-16:30 | **Գործնական**<br>Միզուղիների ինֆեկցիայի կլինիկական դեպքերի ներկայացում  և քննարկում,  իրավիճակային խնդիրներ: | Միլենա Ոսկանյան |
| Օր 7 | | |
| 10:00-12:00 | **Տեսական**<br>Նեֆրոտիկ համախտանիշը երեխաների մոտ, ախտորոշումը, բուժումը, վարումը: | Միլենա Ոսկանյան |
| 12:00-13:00 | **Գործնական**<br>Նեֆրոտիկ համախտանիշով տարբեր երեխաների դեպքերի քննարկում: | Միլենա Ոսկանյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:30 | **Տեսական**<br>Գլոմերուլոնեֆրիտները երեխաների մոտ, հիմնական կլինիկական նշանները, տարբերակումը, բուժումը և հետագա վարումը: | Միլենա Ոսկանյան |
| 15:30-16:30 | **Գործնական**<br>Գլոմերուլոնեֆրիտներով պացիենտների դեպքերի ներկայացում, քննարկում: | Միլենա Ոսկանյան |
| Օր 8 | | |
| 10:00-11:30 | **Տեսական**<br>Զարկերակային հիպերթենզիան երեխաների մոտ: Հայտնաբերումը, գնահատումը, պատճառները, հետազոտման պլանը, վարման տակտիկան: | Միլենա Ոսկանյան |
| 11:30-13:00 | **Տեսական**<br>Սուր և քրոնիկ երիկամային անբավարարություն, կլինիկական դրսևորումները, տարբերակիչ ախտորոշումը, քրոնիկ երիկամային անբավարարության վարումը պոլիկլինիկական մակարդակում: | Միլենա Ոսկանյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | **Գործնական**<br>Քրոնիկ երիկամային անբավարարության դեպքերի ներկայացում, քննարկում, վերլուծություն | Միլենա Ոսկանյան |
| 15:00-16:00 | **Տեսական**<br>Երիկամային տարբեր պաթոլոգիաների հնարավոր բարդությունները, դիսպանսեր հսկողությունը մասնագիտացված կենտրոնում: | Միլենա Ոսկանյան |
| 16:00-16:30 | **Գործնական**<br>Մասնակցություն դիսպանսեր  պացիենտների զննմանը և խորհրդատվությանը: | Միլենա Ոսկանյան |
| Օր 9 | | |
| 10:00-12:00 | **Տեսական**<br>Ստամոքսաղիքային տրակտի օրգանների ֆունկցիոնալ խանգարումները երեխաների շրջանում՝ ֆունկցիոնալ | Գոհար Այվազյան |

| | | |
|---|---|---|
| | դիսպեպսիա, ֆունկցիոնալ փորկապություն, աղիների ֆունկցիոնալ խանգարում, բիլիար համակարգի դիսֆունկցիա | |
| 12:00-13:00 | **Գործնական**<br>Կլինիկական դեպքի ներկայացում և/կամ իրավիճակային խնդիրների վերլուծություն | Գոհար Այվազյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-16:00 | **Տեսական**<br>Մարսողական համակարգի վերին հատվածների քրոնիկական հիվանդություններ՝<br>➢ ԳԷՌՀ ախտաբանություն, կլինիկա, ախտորոշում, բուժում:<br>➢ Գաստրիտներ և գաստրոդուոդենիտներ, խոցային հիվանդություն ՝ ախտաբանություն, կլինիկա, ախտորոշում, բուժում: | Գոհար Այվազյան |
| Օր 10 | | |
| 10:00-11:00 | **Գործնական**<br>Հիմնական լաբորատոր և հատուկ մեթոդները գաստրոէնտերոլոգիայում:<br>Helicobacter pylori դերը հիվանդությունների էթիոլոգիայում | Գոհար Այվազյան |
| 11:00-12:00 | **Տեսական**<br>Մալաբսորբցիայի համախտանիշ: Աղիների քրոնիկական բորբոքային հիվանդություններ: Որովայնացավի տարբերակիչ ախտորոշում: | Գոհար Այվազյան |
| 13:00-14:00 | Ընդմիջում | |
| 14:00-15:00 | Հետթեստավորում | |
| 15:00-16:00 | Թեստերի արդյունքների քննարկում:<br>Ամփոփում, վերապատրաստման դասընթացի փակում | |

Թիրախային լսարան՝ մանկաբույժներ, ընտանեկան բիշկներ, նյարդաբաններ, երիկամաբաններ, ռևմատոլոգներ, գաստրոէնտերոլոգներ, իմունոլոգներ, ալերգոլոգներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 8-16 հոգի: